



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 146

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 61-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կողմից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի հիման վրա ներկայացված դիմումը, որով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը խնդրել է խորհրդատվական բնույթի պարզաբանում տրամադրել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի շուրջ ձևավորված առկա իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. ՀՀ դատարանների նախագահների խորհրդին հասցեագրված իր դիմումում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նշել է, որ որոշ դեպքերում անձանց կողմից ՀՀ վարչական դատարանին դիմում է ներկայացվել՝ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով, որպես հիմք ընդունելով առաջին ատյանի դատարանի վճիռները, որոնցով սեփականատիրոջ սեփականության իրավունքի պետական գրանցումը դատարանը համարել է հիմնազուրկ և առոչինչ է ճանաչել սեփականության իրավունքի ծագման հիմքը:

Վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 61-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը եզրակացություն է արել այն մասին, որ դատարանը տվյալ դեպքում հաշվի չի առել այն հանգամանքը, որ վարչական ակտը, ըստ ներկայացված ապացույցների, ընդունվել է հիմնազուրկ դարձած իրավունքի և դրա ծագման հիմքի առոչինչ ճանաչելու պարագայում: Այս կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդգծել է, որ մինչև առաջին ատյանի դատարանի կողմից վճիռների կայացումը, խնդրո առարկա սեփականության իրավունքը գործարքի (առուվաճառք) արդյունքում փոխանցվել է երրորդ անձի:

2. Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում շարադրված վերլուծությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ դատարանների նախագահների խորհրդին խնդրել է պարզաբանել հետևյալ հարցը. գործարքի (առուվաճառքի) արդյունքում սեփականության իրավունքի պետական գրանցմամբ նախկին սեփականատիրոջ իրավունքի պետական գրանցումը, որպես վարչական ակտ, կորցնո՞ւմ է արդյոք իրավաբանական ուժը, թե՞ ոչ:

3. Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ կամ որոշակի ժամկետով:

Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սույն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել:

Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև տվյալ ակտով նախատեսված ժամկետի լրանալը: Մինչև որոշակի ժամկետով ընդունված վարչական ակտի ժամկետը լրանալը կամ ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, այդ վարչական ակտի ժամկետը կարող է այլ վարչական ակտով երկարաձգվել նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված վերադաս մարմնի որոշմամբ, եթե իրավական ակտով կարգավորվող իրավահարաբերությունները կարգավորվում կամ կարգավորվելու են այլ իրավական ակտով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր իրավական ակտի ընդունման կապակցությամբ փոփոխման կամ լրացման, ինչպես նաև գործողության դադարեցման ենթակա են այն բոլոր իրավական ակտերը կամ դրանց մասերը, որոնք կամ հակասում են նոր ակտում պարունակվող դրույթներին, կամ ընդգրկված են այնտեղ:

Մեջբերված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտն իր գործողությունը դադարեցնում է, այսինքն՝ ուժը կորցնում է, երբ փոխարինվում է այլ վարչական ակտով, որում կարգավորվում են նախկին ակտով կարգավորված նույն իրավահարաբերությունները: Հետևաբար, անշարժ գույքի նկատմամբ անորոշ ժամկետով ընդունված սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ ակտը՝ մեկ այլ ակտով փոխարինված լինելու, այսինքն՝ նույն գույքի նկատմամբ սեփականության իրավունքի նոր գրանցում կատարելու պարագայում դադարեցնում է իր գործողությունը:

4. Մինչ 2014 թվականի հունվարի 7-ը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ «Վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը» (գործող

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (...):

Մեջբերված իրավադրույթի վերլուծությունից երևում է, որ վիճարկման հայցի ներկայացման համար պարտադիր պայման է վիճարկվող վարչական ակտի իրավաբանական ուժ ունենալը: Այսինքն՝ վիճարկման հայցով կարող է վիճարկվել բացառապես ուժի մեջ գտնվող և գործող վարչական ակտը, իսկ այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտը չի կարող վարչական դատարանում վիճարկման հայցի առարկա հանդիսանալ:

Մինչ 2014 թվականի հունվարի 7-ը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի (գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մաս) համաձայն՝ «Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

Մեջբերված իրավադրույթի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը, մինչ 2014 թվականի հունվարի 7-ը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսելով այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորություն, սահմանել է հստակ նախադրյալներ, որոնց առկայության պայմաններում միայն կարելի է դիմել նշված հոդվածի ուժով դատական պաշտպանության: Այս կապակցությամբ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն ընդգծում է, որ մինչ 2014 թվականի հունվարի 7-ը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով մատնանշված նախադրյալներից որևէ մեկի առկայության պայմաններում է հնարավոր պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի այն պետական գրանցումը, որն արդեն իսկ փոխարինվել է մեկ այլ պետական գրանցման ակտով, քանի որ հակառակ դեպքում, արդեն չգործող, ուժ չունեցող և որևէ իրավական հետևանք չառաջացնող պետական գրանցման ոչ իրավաչափ ճանաչումը կկրի զուտ ձևական բնույթ:

5. 2011 թվականի փետրվարի 22-ի թիվ ՍԴՈ-942 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի վիճարկվող 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի առարկային բնորոշ է հետևյալ առանձնահատկությունը. ճանաչման հայցի առարկայի

շրջանակներում օրենսդիրը հնարավորություն է ընձեռում վիճարկել այն միջամտող վարչական ակտերի կամ գործողությունների (անգործության) իրավաչափությունը, որոնք այլևս իրավաբանական ուժ և նշանակություն չունեն դրանց հասցեատիրոջ համար: Ընդ որում, նման հայց ներկայացնելու դեպքում հայցվորը պետք է հետապնդի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերում նշված խնդիրների լուծման նպատակ:

Վերոհիշյալ առանձնահատկությունը վկայում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը հանդես է գալիս որպես իրավունքների պաշտպանության առանձին ինստիտուտ, որն իր իրավակարգավորման առարկայով և հետապնդվող նպատակներով բովանդակային առումով տարբերվում է նույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածների հիման վրա տրամադրվող դատական պաշտպանության ինստիտուտից, և եթե վերջիններիս շրջանակում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ անձի համար իրավաբանական ուժ և նշանակություն ունեցող ակտերի, ապա նույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի պարագայում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ անձի համար այլևս իրավաբանական ուժ և նշանակություն չունեցող ակտերի, այսինքն՝ այնպիսի ակտերի, որոնք իրենց ընդունմամբ, կատարմամբ կամ դրսևորմամբ հասցեատիրոջ համար ուղղակի իրավական հետևանք չունեն»:

6. ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն ընդգծում է, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումներում արտահայտված դիրքորոշումները, որոնց դեմ բերված վճռաբեկ բողոքները ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վերադարձվել են, և դատական ակտերը մտել են օրինական ուժի մեջ, հանգում են նրան, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ դատարանների նախագահների խորհրդին ներկայացված դիմումում նկարագրված իրավիճակում վարչական ակտերն այլևս իրավաբանական ուժ չունեն (տե՛ս, օրինակ, թիվ ՎԳ/3300/05/11 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2012 թվականի ապրիլի 05-ի որոշումը, թիվ ՎԳ-3/0066/05/11 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 26-ի որոշումը, թիվ ՎԳ/3301/05/09 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը):

Հիմք ընդունելով սույն որոշման 3-6-րդ կետերում շարադրված վերլուծությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է

Ձևավորված իրավակիրառ պրակտիկայի համաձայն՝ գործարքի (առուվաճառքի) արդյունքում սեփականության իրավունքի պետական գրանցմամբ նախկին սեփականատիրոջ իրավունքի պետական գրանցումը, որպես վարչական ակտ, կորցնում է իրավաբանական ուժը:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2015թ. հուլիսի 16
ք.Երևան